

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 13

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ**

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ
(Периодический сборник научных статей)

№ 13

Ереван
Издательство ЕГУ
2017

**YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES**

**JOURNAL OF ORIENTAL STUDIES
(scholarly periodical journal)**

№ 13

**YEREVAN
YSU PRESS
2017**

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելիքյան Գուրգեն բ. գ. թ., պրոֆեսոր (*նախագահ*),
Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ , Կարապետյան Ռուբեն
պ.գ.դ., Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
թղթակից-անդամ, Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր,
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ-
անդամ, Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ, Սարգսյան Լևոն
պ.գ.դ., պրոֆեսոր, Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր,
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
ակադեմիկոս, Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ, Կուզնեցով
Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան), Տեր-Մաթևոսյան
Վահրամ պ.գ.թ., Բեյլենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր
(Ռուսաստան), Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ), Գրեկյան
Երվանդ պ.գ.դ., Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր
(Գերմանիա), Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ, պրոֆեսոր
(Ուզբեկստան)

Տոքք Դավայան՝

**ԱՐԵՒԵԼՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐԻ
ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Բանալի բառեր՝ արեւելյան նվագարան, դափ, թառ, թմբուկ, ծնծղա, շեփոր, սազ, քնար, բնաձայնություն, փոխառություն, մշակութային բառեր:

Ինչպէս առհասարակ բոլոր նվագարանների պարագայում, այնպէս էլ արեւելյան երաժշտական գործիքների առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ դրանց տարածույթը հաճախ ընդգրկում է մի քանի երկրներ կամ աշխարհագրական երկրամասեր: Այս պատճառով «ազգային նվագարան» բնորոշումը բավական հեղհեղուկ է, եթե հարցին մոտենանք ճշգրիտ պատմամշակութաբանական չափանիշներով: Նվագարանների անվանումները նույնպէս «թափառում» են երկրից երկիր՝ երբեմն փոքր-ինչ ձեւափոխվելով արտաքնապէս կամ իմաստաբանորեն, երբեմն էլ անճանաչելի դառնալով: Սույն հոդվածը ստուգաբանական-պատմահամեմատական քննություն է մի շարք անվանումների, որոնք բերվում են առանձին ենթախորագրերի ներքո՝ այբբենական կարգով:

Դափ

Ձեռքի փոքր մաղաձեւ կիսաթմբուկ է՝ երբեմն եզրերին ազուցված բռժոժներով եւ փոքր մետաղադրամներով²: Տարածված

¹ Բ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ Հ. Անառնյանի անվան լեզվի ինստիտուտ, ավագ գիտաշխատող, էլ. փոստ՝ torqdal@yahoo.com

է Փոքր Ասիայից մինչև Կենտրոնական Ասիա՝ որպես նվագախմբային կամ մենակատար պարողին յիթմիկ բախումով ձայնակցող գործիք, ունի միակողմանի թաղանթ, որ 40-60 սմ տրամագծով շրջանակի վրա է ձգված³: Որոշ ժողովուրդների, ինչպես, օրինակ՝ եգիպտացիների մեջ, գործածանվել է իբրև սրբազան նվագարան⁴:

Հայ. *դափ* բառը համեմատվել է պարսկ. داف [dap] համանիշի հետ դեռևս Հ. Հյուբշմաննի եւ Հ. Բեյլիի կողմից⁵: Հ. Աճառյանը որպես հայերենի աղբյուր էր ենթադրում միջին պարսկերենը, որը, սակայն, նման բառարմատ չի պահպանել: Միեւնույն ժամանակ, հայտնի են վրացերեն დაფი [dapi], ուտիերեն եւ թուշերեն *dap* «դափ» նույնահունչ զուգահեռները⁶: Ակնհայտ է, որ բառը բնաձայնական ծագում ունի, ուստի դժվար է փոխառությունների ուղղություններ որոշարկելը: Նվագարանի անվանումը լիովին կարող էր կազմվել հենց հայերենի հողի վրա, որտեղ ունենք *դափել* «թմբուկ զարնել», *դափիւն* կամ *դափումն* «աղմուկ, ժխոր, ցնծություն», *դափր հատանել* «ձիու՝ սմբակներով հողին ուժգին հարվածելը» կազմությունները՝ գործածված 5-11-րդ դարերում: Այս *դափ*- արմատի մի տարատեսակն է *դոփ*- «ոտքով գետնին զարնելը» արմատը:

Արաբ. دَفّ [daff] «դափ» բառը փոխառյալ է համարվում պարսկերենից (داف [dap] ձեւից), որն էլ, իր հերթին, արաբերենից ետ

² Յ.Թ. Գալայեան, Բառարան զանձարան հայերէն լեզուի, Գահիրէ, Տպագրութիւն Գալֆա, 1938, էջ 99:

³ Ն. Մկրտչյան, Երաժշտական բառարան, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, Երևան, 2000, էջ 64:

⁴ J. During, Daf(f) and Dāyera // Encyclopaedia Iranica, 1993, vol. VI, p. 560-561.

⁵ H. Hübschmann, Armenische Grammatik, Leipzig: Breitkopf & Härtel, 1897, S. 138, N 183; H. Bailey, Iranica .II // Journal of Royal and Asiatic Society, 1934, pp. 505-518.

⁶ Հ. Անառեան, Հայերէն արմատական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1971, հ. 1, էջ 642:

է վերցրել داف [daf] ձևը⁷: Սակայն նույն արմատի բնաձայնական տարատեսակ ածանցավոր կազմությունները պարսկերենում եւ արաբերենում հայտնի չեն:

Թառ

Լարային կոթավոր կամիթային-կտնտոցահար նվագարան է, որն ունի երկգավաթ գուշ եւ մետաղե լարեր: Բացի Հայաստանից, տարածված է Վրաստանում, Առանում ու Շիրվանում, նաեւ Իրանում, Տաջիկստանում եւ Ուզբեկստանում:

Թեեւ «նվագարան» նշանակությամբ վկայված չէ մեր հին մատենագրության մեջ, սակայն հնուց հայտնի է «փայտե ձող» իմաստով: Ըստ երեւույթին, հենց այս նշանակությունից է զարգացել *թառ* նվագարանի անվանումը, քանի որ այն ունի բավական երկար փայտե կոթ եւ համեմատաբար փոքր իրան: Թառի կոթը (թեւը) բաժանված է լինում 20-23 մասերի, որոնք կոչվում են *փարդա* կամ *բանդ*⁸: Ակնհայտորեն իրանական ծագում ունեցող այս բառերերի կողքին ունենք նաեւ թառի լարերի բնիկ հայկական՝ հնչազադափարային ծագում ունեցող անվանումը՝ *ծինգ*:

Առավել ընդհանրական իմաստով՝ *թառ*-ը կարող էր նշանակել այն փայտանյութը, որից պատրաստվում էր ամբողջ նվագարանը: Թառի իրանը (գուշը) պատրաստվել է թթենու սնամեջ փայտից, իսկ կոթի ականջակիր մասը՝ ընկուզենուց: Առհասարակ, աշխարհի տարբեր ժողովուրդների լեզուներում տարբեր նվագարաններ կոչվել են իրենց ծագման նյութի անունով:

⁷ M. Hassandüst, Farhang-e riše-šenāxtī-e zabān-e fārsī (An Etymological Dictionary of the Persian Language), Tehrān, Farhangestān-e zabān va adab-e fārsī, 2016 (1395), vol. 2, p. 1268, N 2256.

⁸ Ն. Մկրտչյան, Երաժշտական բառարան, էջ 93:

Այսպես, օրինակ, *ուլ* (أول [‘ūd]) կամ *ալ-ուլ* (الاول [al-‘ūd]) կոչվող նվագարանի անվանումն արաբերենում բառացիորեն նշանակում է «փայտե ձող, տախտակի շերտ, փայտանյութ»։ *Թառ*-ը, թվում է, պետք է նույնպես սկզբնապես նշանակեր «չորացած փայտանյութ, փայտե ձող» եւ ծագեր հնդեվրոպական (հ.-ե.) **tars-* (**tʰs-*) նախաձեւից, որի մյուս ժառանգ-ձեւերը պահպանվել են եվրոպական լեզուներում, նշանակում են «չորացնելու հարմարանք, ձողաշարք, տախտակներով եւ ձողերով կազմված շինվածք»⁹։ Քանի որ այս հ.-ե. արմատը՝ «փայտանյութ» իմաստով, հայտնի չէ պարսկերենում կամ այլ իրանական լեզուներում, պետք է ենթադրել, որ *թառ* նվագարանի անվանումը կազմվել է հայերենում¹⁰։

Քիչ հավանական է *թառ* բառի կապը պարսկ. تار [tār] «լար» բառի հետ։ Մեզ հայտնի չէ մեկ այլ դեպք, երբ նվագարանի անվանումը որեւէ լեզվում ածանցվի «լար» բառից։ Ենթադրում ենք, որ այս նվագարանի անվանումը ստեղծվել է Հայաստանում եւ հետագայում տարածվել հարեւան երկրներ։ Պատահական չէ, թերեւս, որ Իրանում ամենահայտնի թառագործները Նոր Ջուղայի հայ վարպետներն էին, իսկ ներկայիս Ադրբեջանի տարածքում էլ 19-20-րդ դարերում առավել հայտնի էին Արցախի թառագործ-վարպետների պատրաստած թառերը։

Իրանախոս երկրներում, ավելի ուշ, *թառ* նվագարանի անվանումը, ժողովրդական կեղծ ստուգաբանությամբ, կարող էր կապվել իրանական تار [tār] «լար» բառի հետ։ Այսպես, պարսկերենի ստուգաբանական բառարանում թառ նվագարանի

⁹ Տե՛ս Հ. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1973, հ. 2, էջ 154-155; Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, «Ասողիկ» հրատ., 2010, էջ 258-259։

¹⁰ Հետաքրքրական է, որ հայերենից փոխառյալ վրաց. თარო [taro] բառը նույնպես նշանակում է «ղարակ», ինչից երևում է, որ հայերեն բառի հին իմաստը եղել է ուղղակի «փայտանյութ», որից հետագայում ճյուղավորվել են «փայտե տախտակ» եւ «փայտե ձող» նշանակությունները։

անվանումը բացակայում է, սակայն, *tār zadan* (تار زادن) «թառ ածել» արտահայտությունը (تار را می زد) դրվում է «լար» բառի տակ¹¹: Այս նույն լեզվամտածողությամբ են կազմվել *դոթառ* «երկլարանի», *սեթառ* «երեքլարանի», *շիշթառ* «վեցլարանի» լարային կոթավոր նվագարանների անվանումները, որոնք շատ ավելի ուշ շրջանի կազմություններ են: Ուշագրավ է, սակայն, որ, օրինակ, հնդիկների մեջ տարածված *սիտար* նվագարանն ամենեւին էլ 3 լար չունի, այլ՝ 10-ից մինչև 20: Բացի, այդ իրանական նշված նվագարաններն էլ ամենեւին թառի նման երկգավաթ տեսք չունեն: Այսպես, օրինակ, դոթառը (կոչվել է նաև *դոմբրա* եւ այլ նման անուններով, մինչդեռ *դոթառ* անվանումը հին տեքստերում չի հանդիպում) ունի սազի նման տանձաձեւ իրան եւ երկար կոթ¹²:

Թմբուկ

Հարվածային նվագարան է՝ գլանաձեւ կամ կիսագլանաձեւ, երկու կողմից թաղանթապատ¹³: Տարածված է աշխարհի տարբեր ծագերում:

Լիովին բացատրելի է հայերենի հողի վրա՝ *-ուկ* վերջածանցով եւ **թն(ւ)մբ-* արմատով, որն ակնհայտ բնաձայնական ծագում ունի, հմնտ. գրական լեզվում *թմբին* «բումբյուն, թնայուն», *թմբիչ* «հարվածելու գավազան, կոպալ» եւ բարբառներում՝ *թմբթմբոց* «սրտի բաբախյուն», *թմբթմբալ* «թրթռալ», *թմիթմիոց* «դղրդյուն» եւ այլ բառերը: *Թմբուկ* նվագարանի բարբառային հոմանիշները նույնպես բնաձայնական

¹¹ M. Hassandūst, Farhang-e riše-šenāxtī-e zabān-e fārsī, vol. 2, p. 808, N 1375.

¹² J. During, Dotār // Encyclopaedia Iranica, 1996, vol. VII, p. 524-525.

¹³ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, Երևան, Հայկ. ՄՍՀ ԳԱ հրատ., 1972, հ. 2, էջ 212:

ծագման բառեր են, ինչպես օրինակ՝ *տմբլոն*, *տմպոն*, *տմպլիկ*, *տմբլա*, *դիմբլիպիտո*, եւն¹⁴:

Թմբուկ ձեւը հայերենում վկայված է արդեն 5-րդ դարից՝ Ս. Գրքի թարգմանության մեջ: Հ. Հյուբշմանը համեմատում է ն. պարսկ. *تنبک* [tanbak, tunbak] համանիշի հետ¹⁵, Հ. Աճառյանը համարում է փոխառյալ միջին պարսկ. **tumbāk* ձեւից¹⁶, որը, սակայն, գոյություն չունի. իրականում միջին պարսկերենում վկայված է *tumbak* «թմբուկ» բառը¹⁷, որը հայերենում փոխառվելու դեպքում կտար **թմբակ* ձեւը: Իրանական ձեւերը համեմատվում են սանսկրիտում վկայված *tumbukin* «թմբուկ» բառի հետ եւ համարվում բնաձայնական ծագման¹⁸: Միեւնույն ժամանակ, հատկանշական է, որ **tumb-* արմատի բնաձայնական տարատեսակ ածանցավոր կազմություններ հայտնի չեն հնդիրանական լեզուներում:

Ծնծդա

Հարվածային նվագարան է՝ բաղկացած երկու տափակ պղնձե կամ բրոնզե սկավառակներից, որոնց կենտրոնում դրսի կողմից գտնվող օղակաձեւ կաշվե կապերից բռնած՝ երաժիշտն այդ սկավառակներն իրար է զարնում եւ զրնգուն ձայն հանում¹⁹:

Հայ. *ծնծդայ* բառն ավանդաբար համեմատվում էր սեմական հոմանիշ ձեւերի հետ՝ սկսած Յ. Շրյոդերից (1711 թ.) եւ Պ. դր Լագարդից (1877 թ.), համարվում էր ծագած եբրայերենից կամ

¹⁴ Տե՛ս Ա. Սուրբասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967:

¹⁵ H. Hübschmann, Armenische Grammatik, S.154, N 246.

¹⁶ Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հ. 2, էջ 189.

¹⁷ H. Nyberg, A Manual of Pahlavi, Wiesbaden, 1964, p. 195.

¹⁸ M. Hassandüst, Farhang-e riše-šenāxtī-e zabān-e fārsī, vol. 2, p. 894, N 1551.

¹⁹ Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, Երևան, ՀՍՍՌ Պետ. հրատ, 1944, հ. 2, էջ 346; Մ. Օրմանեան, Ծիսական բառարան, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1979, էջ 142:

ասորերենից²⁰: Իրականում, սակայն, սեմական ձեւերը բնաձայնական ծագում ունեն, ուստի դժվար է միանշանակ փոխառությունների ուղղություններ որոշարկելը: Հ. Աճառյանն ասոր. *šeššalā* / *šiššalā*, եբրայ. *šeššalim*, արամ. *šalšalā*, եթովպ. *šanāšal(at)* «ծնծղա» ձեւերը համարում է ծագած սեմական *š(a)ll- «հնչել» արմատից (եբրայ. *šll-*, ասոր. *šal-*, արաբ. *صَلَّ* [*šall-*]):

Ակնհայտ է, որ հայ. *ծնծղայ* ձեւը նույնպես բնաձայնական ծագում ունի: Վկայված է Աստվածաշնչի եւ Գրիգոր Նարեկացու տեքստերում, սակայն բառի բնաձայնական ծագման ապացույցներից մեկն էլ նրա՝ հնուց ի վեր մեր մատենագրության մեջ վկայված՝ ձայնեղացված եւ շնչեղացված տարբերակներն են՝ *ձնծղայ*, *ձնձղայ* եւ *ցնծղայ*²¹: Ըստ երեւույթին, հայերենի բառարմատն է՝ **ծինծ-*, որը նմանաձայնությամբ արտահայտել է մետաղի հնչումը: Այս արմատի՝ մեկ այլ աճականով կազմված տարբերակն է՝ **ծինգ* ձեւը, որից Արարատյան որոշ խոսվածքներում ունենք *ծինգի* «պղնձե աման» բառը²²: Նույն արմատից Արարատյան բարբառում ունենք նաեւ բնաձայնական *ծնգալ*, *ծնգծնգալ*, *ծրնգալ* բայերը, որոնք նշանակում են «հնչուն մետաղի ձայն հանել»²³:

²⁰ H. Hübschmann, *Armenische Grammatik*, S. 306; Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, էջ 465:

²¹ Աղբյուրները տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, էջ 465:

²² Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, տպարան Ս. Էջմիածնի, 1912, էջ 308: Հմմտ. նաեւ թառի յարերից մեկի անվանումը՝ *ծինգ*: Այս բնաձայնական արմատին են հարում ասոր. *šng'* [*šāngā*, ծանգա] եւ պարսկ. *سَنج* [*sanž*, *sinž*] «ծնծղա» բառերը, որոնցից առաջինը համարվում է իրանականից փոխառյալ. պարսկերենը համարվում է նաեւ արաբ. *سَنج* [*šanž*, *šenž*] բառի փոխատուն (տե՛ս M. Hassandüst, *Farhang-e riše-šenāxti-e zabān-e fārsī*, vol. 3, p. 1762, N 3116), թեեւ հնչյունապես պարսկական եւ արաբական ձեւերը միանգամայն կարող էին փոխառված լինել ասորերենից կամ հայերենից:

²³ Նույն տեղում, էջ 314; Հ. Աճառյան, Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, Լազարեան ճեմարան արեւելեան լեզուաց, 1913, էջ 521:

Հավանաբար **ծինծ*- արմատից *-եղ* կամ *-իղ* վերջածանցով է կազմվել **ծնծեղ* / **ծնծիղ* բառը, որը պետք է նշանակեր «մետաղի նման հնչեղ, փայլուն (տեսքով կամ ձայնով)»։ այս բառից *-տ* աճականով ունենք *ծնծդտայ* բարբառային բառը, որը նշանակում է «մաքրությունից փայլել»²⁴։ Նույն բառի՝ մեկ այլ սաստկական աճականով, ձայնեղացված տարբերակն է ներկայացնում *ձնձդկտայ* բայը, որը վկայված է Արարատյան բարբառում եւ նշանակում է «փայլվել, փողփողալ» (օրինակ՝ «վկացքը արեւի տակ ձնձդկտում է»²⁵):

Վերականգնված **ծնծեղ* / **ծնծիղ* բառից՝ *-այ* վերջածանցի հավելումով պետք է կազմվեր *ծնծդայ* նվագարանի անվանումը, որի բուն նշանակությունը կարող էր լինել «մետաղահունչ, ուրախ ձայն ունեցող»։ Հայ. *ծնծդայ*-ից փոխառյալ են համարվում վրաց. *წიბწილი* [c'inc'ili] եւ *წიბწილა* [c'inc'ila] տարբերակները²⁶, որոնք իրենց պայթաշփական խուլ կոկորդածերպային բաղաձայներով ճշտիվ համապատասխանում են հայերենին։ Ինչ վերաբերում է վերջահար ձայնավորին, ապա վրացական առաջին տարբերակն ավելի շուտ պետք է ծագեր հայ. **ծնծդ*- (< **ծինծիղ*-) ձեւից, իսկ երկրորդը՝ *ծնծդայ* ձեւից։

Շեփոր

Փողային մունդշտուկավոր երաժշտական կամ ազդանշանային գործիք է՝ կափույրներով կամ առանց կափույրների, ծագում է սովորական եղջերափողերից²⁷, որոնք զարգանալով՝ տարատեսակ ձեւեր են ստացել աշխարհի տարբեր ժողովուրդների մեջ։

²⁴ Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երեւան, 2002, հ. 2, էջ 417:

²⁵ Հայոց լեզվի բարբառային բառարան, 2004, հ. 3, էջ 339:

²⁶ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, էջ 465:

²⁷ Ն. Մկրտչյան, Երաժշտական բառարան, էջ 205-206:

Այս բառը *շեփորայ* եւ *շիփորայ* տարբերակներով ու «նվագափող, եղջերափող» նշանակությամբ վկայված է 5-րդ դարից՝ Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ եւ Ագաթանգեղոսի երկում: Նշված ձեւերը հնչյուն առ հնչյուն համապատասխանում են ասոր. *šifūrā* «շեփոր» բառին, որն էլ համարվել է հայերեն բառի փոխատուն դեռեւս Հ. Հյուբշմանի կողմից²⁸: Ինչ վերաբերում է հայ. *շեփոր* տարբերակին, ապա այն կարող էր փոխառված լինել արամեական *špwr* ձեւից:

Հավանական է, որ ինդրո առարկա բառեզրը սեմական ծագում ունի, քանի որ աքքադերենում *šapparu* նշանակում էր պարզապես «վայրի այծ», իսկ արաբերենում՝ سوافير [savāfir] «խոյի եղջյուրներ»²⁹ (թեեւ, որպես զուգահեռ բերվում է նաեւ շումերերեն *šēgbar* «լեռնային այծ» բառը³⁰): Արամերեն բառի ցեղակից ձեւերը հայտնի են սեմական լեզուներում՝ հուդ. *šifōra*, եբրայ. *šōfār* «շեփոր, պատերազմական փող», որոնցից փոխառյալ է դրվում ասորական ձեւը: Փոխառյալ ձեւեր կան նաեւ պարսկերենում (شاپور [šāypūr, šēpūr] եւ شپور կամ سپور [sa(p)pūr]), ինչպես նաեւ արաբերենում՝ شبور [šabūr]) տարբերակով, որոնք, ինչպես համարվում է, երկուսն էլ ծագում են արամերենից³¹:

Մազ

Լարային կոթավոր կամիթահար նվագարան է, որն ունի ունի տանձաձեւ իրան, պղնձե լարեր եւ գործածվում է հատկապես աշուղ-գուսանների կողմից, որոնք այն նվագում են ոսկրե կամ

²⁸ H. Hübschmann, Armenische Grammatik, S. 313; Հ. Աճառեան, Հայերէն արմատական քառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1977, հ. 3, էջ 511:

²⁹ Նույն տեղում:

³⁰ The International Standard Bible Encyclopedia (gen. ed.: G.W. Bromley, Michigan, 1979-1988, vol. 3, Music, p. 439.

³¹ M. Hassandüst, Farhang-e riše-šenāxtī-e zabān-e fārsī, vol. 3, p. 1932, N 3454.

եղջյուրե կոնսոնոգով: Այս նվագարանը նույն անվամբ կոչում են թուրքերն ու քրդերը (*saz*), վրացիները (*sazi*), օսերը (*saaz*), լեզգիները (*saz*) եւ արեւելյան այլ ժողովուրդներ, մինչդեռ, օրինակ, պարսիկները եւ լակերը *saz* ասելով հասկանում են պարզապես «երաժշտական գործիք»:

Անկասկած է, որ *uuq* նվագարանի անվանումը կապված է պարսկ. ساختن [sāxtan] բայի ساز [sāz-] ներկայի հիմքի հետ: Պարսկերենի Ստուգաբանական բառարանում ساز [sāz] «նվագարան» բառի ծագումը զուգադրվում է լատ. *instrumentum* բառի եւ նրա *struere* «կառուցել, շինել» արմատի հարաբերակցությանը³²:

Ճիշտ է, որ պարսկ. *sāz-* (*sāxt-*) բայարմատի հիմնական նշանակությունն է՝ «շինել, կառուցել, պատրաստել, հորինել», սակայն մյուս իմաստներն են՝ «հարմարեցնել, պատշաճել, հարդարել, սազեցնել»: Առավել հավանական է, որ հենց վերջիններից է առաջացել նվագարանի անվանումը. փաստորեն, այն բառացիորեն նշանակել է «[երգը] հարդարող, հարմարեցնող», այսինք՝ մի գործիք, որը զուսան-կատարողի երգը հարդարել է, երաժշտությունը հարմարեցրել, սազեցրել ունկնդրի ականջին:

Մյուս կողմից, սակայն, «սազեցնել» նշանակությունը կարող էր վերաբերել նաեւ նվագարանի լարվածքը կարգավորելուն: Այսպես, 19-րդ դարի խոսակցական հայերենում *uuq* բառը նշանակում էր նաեւ «աղէկ կարգի դրած. բազմայարմար նուագարան»³³: Թվում է, թե *sāxtan* (*sāz-*) բայարմատի (ներկայի հիմքի) կարճ ձայնավորով տարբերակն է ներկայացնում պարսկ. سزیدن [sazidan] «սազել» բայը, որը նախորդ ներգործական ձևի կրավորական տարբերակն է ներկայացնում:

³² Ibid, p. 1643, N 2897.

³³ Եղ. Հիւրմիւզեան, Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ, Վենետիկ, Տպարան Սուրբ Ղազար, 1869, էջ 471:

Հայերի մեջ, առհասարակ, սկզբնապես *սազը* ընդհանրական անվանումն էր ցանկացած լարային նվագարանի, որը գործածում էին գուսանները: Այսպես, Սայաթ-նովան, օրինակ, «սազի» մի տեսակ էր համարում քամանչան. «*Ամեն սազի մեջըն գոված դուն թամամ տասըն իս, քամանչա՛,...*»: Ըստ էության, սազը գուսանական երգի ձայնային կատարումը նվագակցությամբ հարմարեցնում էր ունկնդրի ականջին: Միջին հայերենում այս բառը վկայված է հենց երկու նշանակություններով՝ «պատշաճ, հարմար, վայելուչ» եւ «երաժշտական գործիք»: Քանի որ հայերենում չկա երկար եւ կարճ ձայնավորների տարբերակում, կրավորական եւ ներգործական ձեւերը, փաստորեն, համընկել են: Այսպես, միջին հայերենում *սազել* բայը նշանակել է թե՛ «հարմարեցնել, համապատասխանեցնել, պատրաստել», թե՛ «հարմար գալ, պատշաճ լինել, պատշաճել»³⁴:

Ուշագրավ է, որ միջին հայերենում *սազել* բայի իմաստներից մեկն էլ եղել է «հորինել, ստեղծել, սարքել», որը կիրառվել է հենց նվագարան պատրաստելու առնչությամբ: Նույն բայը՝ *սազել*, նշանակել է նաեւ «նվագարանը լարել, սարքել»³⁵:

Քնար

Անկոթ լարային նվագարան է, մարմինը՝ փայտե, երկձյուղ եղանի տեսքով՝ դուրս բացված եղջյուրներով, չորսից յոթ լարերով, որ նվագում էին մատներով կամ փոքրիկ փղոսկրյա փայտիկով³⁶:

³⁴ Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 2009, էջ 678-679:

³⁵ Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1979, հ. 4, էջ 154; Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, էջ 679:

³⁶ Ստ. Մալխասյանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 4, Երևան, ՀՍՍՌ Պետ. հրատ., 1945, էջ 578; Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980, հ. 4, էջ 740:

Մեր նոր գրական լեզվում համապատասխանում է հուն. *lyra*-ին եւ լատ. *lyra*-ին:

Քնարն իբրեւ երաժշտական գործիք երբեմն նույնացվել է քամանչային, սանթուրին, կիթառին, փանդիռին կամ տավիղին, քամանիին կամ թամբուրին³⁷: Հայերենում քնար նվագարանը վկայված է Ս. Գրքի հայերեն թարգմանությունից սկսած (5-րդ դար)՝ նաեւ բարդությունների մեջ: Այստեղ այն համապատասխանում է արամեական *kinnārā*-ին եւ եբրայական *kinnōr*-ին, որոնք հունարեն թարգմանվել են *κιθάρα* «կիթառ» եւ որոնց իրական տեսքը, սակայն, մինչ օրս հստակ հայտնի չէ: Այս անհստակությունն է պատճառ դարձել «Դավթի քնար»-ի տարապատկերումների: Ուշագրավ է, որ ժամանակակից եբրայերենում *kinnōr* բառը պարզապես «ջութակ» է նշանակում:

Հ. Հյուբշմանը որպես հայ. *քնար* բառի զուգահեռներ բերում էր ասորերեն, եբրայերեն եւ հունարեն ձեւերը՝ հայերենը համարելով փոխառյալ ասորերենից³⁸: Հ. Աճառյանն այս զուգահեռների շարքում ավելացնում է նաեւ արամերեն, արաբերեն, դպտիերեն եւ լատիներեն ձեւերը, սակայն հետեւելով Հ. Հյուբշմանին՝ հայ. *քնար* բառը համարում է ասորական փոխառություն³⁹: Ն. Մարտիրոսյանը հայերեն բառը համեմատում է իւեթերեն⁴⁰, իսկ Ն. Մկրտչյանը՝ աքքադերեն հոմանիշների հետ⁴¹:

³⁷ Եդ. Հիրմիզեան, Բազմիք յաշխարհաբառէ ի գրաբառ, էջ 560; Ստ. Մալխասյանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 4, էջ 578; Աւետիքեան Գ., Միւրմէլեան Խ., Աւգերեան Մ., Նոր բազմիք հայկազեան լեզուի, Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու, 1836-1837 (վերահրատարակություն՝ Երեւան, ԵՊՀ հրատ., 1979-1981): Մ. Ջախջախեան, Բազմիք ի բարբառ հայ եւ իտալական, Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու, 1837, էջ 1439:

³⁸ H. Hübschmann, Armenische Grammatik, S. 319.

³⁹ Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հ. 4, էջ 582:

⁴⁰ Ն. Մարտիրոսեան, Հայերէնի յարաբերութիւնը Հեթիղերէնի հետ. գանազան գիտնականներու տեսութիւններու մէկտեղում // Հանդէս ամսօրեայ, 1924, № 9-10, էջ 458:

⁴¹ Н. Мкртчян, Семитские языки и армянский, Ереван, НАН РА Институт востоковедения, 2005, с. 190.

Եթե մեկտեղենք նշված հայագետների բերած զուգահեռները սեմական լեզուներում (աքքադ. *kinnāru(m)*, ասոր. *kennārā* «կիրթառ», արամ. *kinnārā*, եբրայ. *kinnōr*, արաբ. كيران [kirān], كَنَّارَه [kannāra]), դատիերենում (*kennōru*), ինչպես եւ խեթերենում (*kinir-asš*), հունարենում (*κινύρα*, *κιννώρα*) ու լատիներենում (*cinyra*), ապա երեւում է, որ հայերենն իր *h-w* հոլովմամբ հնչյունապես առավել մոտ է արամերենին եւ արաբերեն երկրորդ ձեւին, ուստի ավելի հավանական կլիներ ենթադրել փոխառություն այդ լեզուներից:

Այդուհանդերձ, ներկա մեր իմացության մակարդակից ելնելով՝ դժվար է նախապատվություն տալ նշված լեզուներից որեւէ մեկին: Ինչպես երեւում է, *քնար* բառը եւ նրա զուգահեռները հին աշխարհում բավական տարածում ունեցող բառերը էին, ուստի այն ավելի ճիշտ կլինի համարել տարածաշրջանում ընդհանուր մշակութային եզրույթ: Ամեն դեպքում, սեմական լեզուներում *քնար* բառը չունի որեւէ արժանահավաստ ստուգաբանություն: Բացի այդ, ասորերենից, արամերենից կամ արաբական երկրորդ ձեւից փոխառյալ լինելու պարագային՝ հայերենում բառը պետք է որ ունենար **քնարայ* տարբերակը:

Այսպիսով, ստուգաբանական այս ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված անվանումների մի մասը, որը նախկինում համեմատական լեզվաբանների կողմից դիտարկվում էր իբրեւ փոխառյալ ժառանգություն հարեւան իրանական եւ սեմական լեզուներից, իրականում ունի հնչազաղափարային անկախ ծագում (*դասի*, *թմբուկ*, *ծնծդայ*) կամ պատկանում է տարածաշրջանի ընդհանուր մշակութային բառոլորտին (*քնար*): Միեւնույն ժամանակ, երկու անվանում, այնուամենայնիվ, փոխառվել են հարեւան լեզուներից՝ պարսկերենից (*usq*) եւ ասորերենից (*շեփոր*): Մի նվազարանի անվանումն էլ (*թատ*), ամենայն

հավանականությամբ, ունի բնիկ հնդեվրոպական ծագում հայերենում, որն այս դեպքում աղբյուր է ծառայել տարածաշրջանի այլ լեզուներում փոխառությունների համար:

НАЗВАНИЯ НЕКОТОРЫХ ВОСТОЧНЫХ МУЗЫКАЛЬНЫХ ИНСТРУМЕНТОВ В АРМЯНСКОМ (резюме)

Դալալյան Թորկ

Ключевые слова: *восточный музыкальный инструмент, бубен (даф), тар, барабан, тарелки (цимбалы), труба (рог), саз, лира, звукоподражание, заимствование, культурное слово.*

Ареал распространения музыкальных инструментов вообще, и восточных в частности, нередко включает в себя несколько стран или географических регионов. По этой причине, понятие «национального инструмента» весьма аморфно, если подойти к вопросу со строгими историко-культурологическими критериями. Названия инструментов также «бродят» из страны в страну, порой слегка меняют свой внешний облик или семантику, порой становятся неузнаваемыми. Данная статья представляет собой этимологическое сравнительно-историческое исследование ряда названий, которые приводятся под отдельными заглавиями, в алфавитном порядке : бубен (даф), тар, барабан, тарелки (цимбалы), труба (рог), саз, лира.

Этимологическое исследование показывает, что часть указанных названий, которая ранее рассматривалась компаративистами как заимствованное наследие из соседних иранских или семитских языков, на самом деле имеет идеофоническое происхождение (*դափ* [dapˈ] ‘даф’, *թւրքիկ*

[t'mbouk] 'барабан', *ծնծղալ* [sncʰaɹ] 'цимбалы') или же принадлежит к сфере общих культурных терминов региона (*քնար* [k'nar] 'лира'). Тем не менее, два названия были заимствованы из соседних языков: из персидского (*սազ* [saz] 'саз') и из сирийского (*շեփոր* [šep'or] 'труба'). Наименование одного инструмента (*թար* [t'ar] 'тар'), по всей видимости, имеет исконно индоевропейское происхождение в армянском, который послужил источником для заимствований в других языках региона.

THE NAMES OF SOME ORIENTAL MUSICAL INSTRUMENTS IN ARMENIAN (Summary)

Dalalyan Tork,

Key words: *oriental musical instrument, tambourine (daf), tar, drum, cymbal, trumpet (bugle), lyre, onomatopoeia, loanword, cultural term.*

The areal of spread of musical instruments in general, and of oriental ones in particular, often includes several countries or geographic regions. For this reason, the definition of "national instrument" is rather conditional if we approach the issue with accurate historical and cultural criteria. The names of the instruments also "roam" from country to country, sometimes being slightly transformed outward or semantically, sometimes becoming unrecognizable. This paper represents an etymological comparative-historical study of a series of names, which are brought under separate headings, in alphabetical order: tambourine (*daf*), *tar*, drum, cymbal, trumpet (*bugle*), *saz*, lyre.

Our etymological research shows that some of these names, previously being considered by the comparativists as a borrowed

heritage from neighboring Iranian or Semitic languages, are in fact of an ideophonic-onomatopoeic origin (*դափ* [dapʰ] ‘daf’, *թմբուկ* [tʰmbouk] ‘drum’, *ծծողայ* [cnclay] ‘cymbal’) or belong to the sphere of common cultural terms of the region (*քնար* [kʰnar] ‘lyre’). However, two names were borrowed from neighboring languages: Persian (*սազ* [saz] ‘saz’) and Syrian (*շեփոր* [šepʰor] ‘trumpet’). The name of one instrument (*թար* [tʰar] ‘tar’), apparently, has a native Indo-European origin in Armenian, which served as a source for loans in other languages of the region.